- Construction and furnishing of the Stepanakert Military Hospital Rehabilitation Center & Soldier’s Home.
- Clean-power, silent inverter generators for the front lines.

Considering the post-war situation and needs in Artsakh, starting in December 2020, parallel to its armed forces projects, “Support Our Heroes” NGO has started its Artsakh Strategic Repatriation project, providing social and economic assistance to families repatriating to Artsakh, reconstruction of damaged homes, and in collaboration with the Artsakh government and

the Nakhijevanik village of the Askeran region, the construction and furnishing of new homes in Nakhijevanik, for young, multi-child repatriating families.

“Support Our Heroes” NGO collaborates with thousands of donor individuals and organizations from Armenia and the world, including charitable organizations such as the Aurora Humanitarian Initiative.

“Support Our Heroes” is a non-government non-profit organization registered in Armenia and the USA, with a 501(c)(3) tax deductible status in the USA.

“Support Our Heroes” was established on April 3rd, 2016 and has been working closely with the Artsakh Defense Army, supporting the armed forces in the areas of logistics and health and coordinating its projects closely with the army high command.

In 2018, “Support Our Heroes” delivered its first new generation ambulance to the Artsakh Defense Army. The new (year 2018), 4x4 Toyota Landcruiser 78 series ambulance was fully furnished with the latest medical equipment.

HRW Documents More Evidence of Torture

Continued from page 1

likely the victim of an extrajudicial execution. Azerbaijani forces detained these civilians even though there was no evidence that they posed any security threat – they had no weapons and did not participate in the hostilities.

More than three months after the truce, Azerbaijan has returned a total of 69 Armenian Prisoners of War (POWs) and civilians. An Armenian foreign ministry representative told HRW that they believe more than a dozen civilians are still in Azerbaijani custody. Their families are increasingly distraught, especially in light of the abundance of graphic videos of abuse of prisoners circulating on social media, and the horrendous accounts of some of those who have been repatriated.

HRW reminds that under the Fourth Geneva Convention, which sets out protections for civilians in an international armed conflict, civilians are “protected persons.” The convention requires that anyone “taking no active part in the hostilities, [...] shall in all

circumstances be treated humanely, without any adverse distinction founded on race, color, religion or faith, sex, birth or wealth, or any other similar criteria.”

Also, as a state party to the International Covenant on Civil and Political Rights and the European Convention on Human Rights, Azerbaijan is bound by prohibitions on arbitrary detention as well as on torture and other degrading or inhuman treatment.

“The willful killing and ill-treatment of protected persons that we document constitute war crimes under international humanitarian law. Azerbaijani authorities should, without further delay, investigate the credible allegations regarding the unlawful detention of these civilians, their inhuman and degrading treatment, and the possible extrajudicial execution of a detainee, with a view to holding all perpetrators to account. They should also promptly free and repatriate any and all civilians who remain in their custody,” says Tanya Lokshina, Associate Director, Europe and Central Asia Division.

Important Archaeological Materials Discovered During Renovation of Armenian Kindergarten in Jerusalem



of the Armenian Patriarchate of Jerusalem, informed that important archaeological materials have been discovered during the renovation of the Armenian kindergarten in Jerusalem, which need more detailed examination.

One of the valuable findings is the large cross-stone (khachkar), which dates back to the 12th century or earlier. It is a typical Armenian cross

ered cross is depicted, as well as grape motifs.

A mosaic was also discovered, judging by the style, probably from the Byzantine period. Copper coins from the Byzantine and (or) Mamluk period have also been found.

These findings show the early Armenian presence and pilgrimage in Jerusalem.

Los Angeles City Council Declared

Continued from page 1

and fair elections, including the United States of America.” The resolution refers to an earlier document officially adopted by the Los Angeles City Council in September 2013, according to which the Republic of Artsakh was recognized as a free, independent and sovereign state. It also refers to the resolution adopted in December 2020, where “the Los Angeles City Council reaffirmed the City’s commitment to uplifting and supporting the struggle of the Republic of Artsakh and its people for self-determination, and called upon the United States federal government to do likewise.”

“On September 27, 2020, Azerbaijan’s military forces launched a much more massive unprovoked attack against the Republic of Artsakh, coordinated with and supported by Turkey, utterly shredding the 30-year ceasefire and resuming full scale warfare targeted at destroying and ethnically cleansing the indigenous Armenian population and conquering by force the territory of the independent Republic of Artsakh,” stated the resolution.

It also confirms that “throughout its unprovoked invasion, Azerbaijan intentionally targeted civilian areas using heavy weaponry including drones, rockets and heavy artillery, leading to widespread and indiscriminate death and destruction and the displacement of much of the population of Artsakh.

“Azerbaijan’s military and the terrorist mercenaries it hired have committed horrendous war crimes and atrocities, including the murder, torture, and dismemberment of civilians and prisoners of war, the desecration of places of worship and sacred and historic sites, and the wanton destruction of civilian infrastructure,” noted by the Los Angeles City

Councilmembers.

The resolution also affirms that “throughout the brutal invasion, Azerbaijan terrorized civilians by targeting them with munitions that are widely banned and condemned by the international community, including cluster bombs and white phosphorus.”

The resolution further states that “major combat operations ended on November 9, 2020, although Azerbaijan’s forces have continued to engage in violence, aggression and cruelty even after that date.”

“Therefore, be it resolved that by the adoption of this resolution the City of Los Angeles honors and mourns the thousands of lives lost in this attack, and declares November 9, 2020 a day of remembrance and commemoration of the victims of Azerbaijan’s aggression against the Republic of Artsakh,” states the resolution in its conclusion.


Simultaneously, the Los Angeles City Council adopted another resolution that relates to the city of Shushi. As it is known, on April 24, 2012, the City Council of Los Angeles recognized the city of Shushi, under the governance of the Republic of Artsakh, as a “Friendship City” of the City of Los Angeles.

Therefore, “the City of Los Angeles does hereby temporarily suspend its “Friendship City” relationship with Shushi for as long as it is illegally controlled by Azerbaijan, and will renew that status when Shushi is again free of Azeri conquest and oppression and restored to democratic governance as part of the Republic of Artsakh.

”Lastly, “the City Council of Los Angeles extends its warm greetings, support and best wishes for safety and security to Shushi’s Mayor Artsvik Sargsyan and the entire democratically elected leadership of Shushi, and the City Council further looks forward to the day that Shushi is once again liberated from Azeri occupation.”

Ոչ եւս է ընկեր Կարօ Շիմշիրեան

Քանի մը օր առաջ մահուան գոյժն իմացանք Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան երբեմնի ղեկավարներէն՝ ընկեր Կարօ Շիմշիրեանի: Ան շրջանէ մը ի վեր կը տառապէր Covid-19 անողոք հիւանդութեամբ, որուն ճիրաններուն մէջ աւանդեց իր հոգին 12 Մարտ 2021, Փարիզ, 80 տարեկանին:



Հանգուցեալը Փարիզի մէջ ունէր իր սեփական ոսկերչական խանութը: Ան ոչ միայն յաջող գործարար մըն էր, այլ հաւատաւոր նուիրուած գաղափարաւէր գործիչ մը, ազգային մը:

Կարօ Շիմշիրեան պատանեկան տարիներուն Պէջրութի մէջ կը մասնակցի Ս.Դ.Հ.Կ. Տիրուհի Երիտասարդական-Ուսանողական Միութեան հայրենանուէր գործունէութեան: Իր ծառայասիրութեան եւ անխնայ աշխատանքներուն համար կ'արժանանայ ընկերական շրջանակի եւ պատասխանատուներու անվերապահ գնահատանքին: Եղած է նաեւ Նոր Սերունդ Մշակութեային Միութեան «Արտաւազդ» թատերաուժի գործօն անդամ:

Լիբանանի քաղաքացիական պատերազմներուն բերումով՝ ընտանեօք կը փոխադրուին Ֆրանսա: Իր սեփական գործին աւելնելու կարեւոր ներդրում կ'ունենայ նաեւ հայ գաղութի ազգային-հասարակական կեանքին ներս: Փարիզի արուարձաններէն Ալֆորվիլ հայաշատ քաղաքին մէջ կ'անդամակցի տեղւոյն Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան «Նազարբեկ» մասնաճիւղին, յետագային դառնալով վարչութեան պատասխանատուներէն եւ ապա Ֆրանսայի Հնչակեան Կուսակցութեան վարիչ մարմնի անդամ:

80-ական թուականներուն, իր նախաձեռնութեամբ, տեսլապաշտ եւ գաղափարակից հոյս մը ընկերներու հետ, Ալֆորվիլի մէջ կը

հիմնեն Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան մասնաճիւղը եւ զայն կ'օժտեն սեփական ակումբով մը, որ յետագային դարձաւ այդ շրջանի բազմաբեղուն գործունէութեամբ փնտրուած հաւաքայր մը: Ողբացեալ Կարօ Շիմշիրեան յարգուած երկրամեայ անդամներէն էր վերոյիշեալ ակումբի ինամակալ մարմնին, որուն գանձապահի պաշտօնը կը վարէր ձեռնհասութեամբ:

Կարօ Շիմշիրեան վերջերս թէեւ հանգստեան կոչուած էր, սակայն իր անվերապահ աջակցութիւնն ու զօրակցութիւնը չէր զլանար իր սիրած կազմակերպութեան եւ համայնքային այլ կարիքներուն, նիւթապէս եւ բարոյապէս սատար հանդիսանալով անոնց:


Քորոնա ժահրի անողոք մահով խոր սուգի մատնուած է Կարօյի այրին՝ Նինեթը, գաւակները, հարազատներն ու ընկերական լայն շրջանակը:

Բարի երթ յաւերժի ճամբորդին:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ Եղիցի»

Գ. ՄՈՒՈՅԵԱՆ

Լոյս Տեսալ «Պէշիկթաշի Յուշամատեն»ը



Թուրքիոյ Հայոց Պատրիարքարանի մատենաշարէն լոյս տեսաւ Պէշիկթաշի թաղի պատմական անցեալը ներկայացնող ուսումնասիրութիւն մը՝ «Պէշիկթաշի Յուշամատեն» խորագիրով: Այդ կարեւոր աշխատասիրութեան հեղինակն է Տէր Գրիգոր Ա. Քահանայ Տաճարեանը, որ նախապէս ալ նման բնոյթով հատոր մը հրատարակած էր նիւթ ունենալով Գատրգիւղ թաղամասը:

Նոր հրատարակութեան առթիւ Տէր Գրիգոր Քահանայ իր հետ ունենալով Պէշիկթաշի թաղական խորհուրդէն ներկայացուցիչներ, այցեւելց Պատրիարքարան եւ հրատարակութեան առաջին օրինակը նուիրեց Սահակ Բ. Պատրիարք սրբազանին:

Պատրիարք Հայրը գնահատանքով արտայայտուեցաւ Տէր Հօր մասին, որուն յուշամատենի աշխատութիւններուն օղակ մը եւս կ'աւելնար այս շքեղ գիրքով: Պատրիարք Հայրը, դրուատեց նաեւ Պէշիկթաշի եկեղեցին, հանդերձ իր մեծ ընտանիքով ու մաղթեց որ իրենց գործունէութիւնը մնայ պայծառ:

Պատրիարք Հայրը, թելադրեց նաեւ որ այս գիրքը ծանօթացուի շնորհահանդէսով մը: Այցելուներ յայտնեցին, որ արդէն իսկ այս ուղղութեամբ յանձնախումբ մը գործի լծուած է, առաջ-նորդութեամբ՝ Հայր Սուրբին, որ Ս. Զատիկի յաջորդող օրերուն կը նատարակեն գիրքը ծանօթացնել, Պատրիարք Սրբազան Հօր բարձր հովանաւորութեամբ:

Հրանդ Տինքի Մահուան 14-րդ Տարելիցին Առթիւ

Հրանդ Տինքի մահուան 14րդ տարեդարձն այս տարի նշուեցաւ աւելի համեստ պայմաններու մէջ, քանի որ քորոնա համաճարակի պատճառով ամենուրէք ստեղծուած էին սահմանափակումներ:

Արդարեւ «Ակօս» թերթի խմբագիր Հրանդ Տինքի դէմ կատարուած դաժան ոճրագործութեան հեղինակները կը մնան բանտարկուած եւ անոնցմէ շատերուն դատավճիռը ցարդ չէ կայացած:

Համաճարակի ներկայ դժուարին պայմաններուն մէջ Տինքի տարելիցին եղան սահմանափակ ոգեկոչումներ: Այս առթիւ Պոլսահայ «Մէկ» Մշակութային Յանձնախումբը կազմակերպած էր առցանց հարթակի ասուլիս մը («գում»), որուն իրենց մասնակցութիւնը բերին պոլսահայ եւ գնաստահայ ծանօթ անձնաւորութիւններ: Անոնք իրենց յուշերով եւ տպաւորութիւններով նահատակ լրագրողի յիշատակը ոգեկոչեցին: Աւարտին ելոյթ ունեցաւ Հրանդ Տինքի այրին Ռաբէլ Տինք: Ան մամաւորաբար անդրադարձաւ ոճրագործներու տարիներ տեւող անվերջանալի դատավարութեան: Իր եզրակացութեան մէջ յորդորեց «յոյսով եւ միասնական ոգիով ու աննկուն կամքով իրարու նեցուկ



կանգնիլ: Թերեւս միայն այն ատեն կարելի է արդարութեան հասնիլ»: Հրանդ Տինքի մահուան 14րդ տարելիցին առթիւ եւ Գանատայի Պոլսահայ Միութեան հիմնադրութեան 50-ամեակի միջոցառումներու զօով հրապարակի վրայ է Հրանդ Տինքի նուիրուած «Հրանդ Տինք Ժամանակակից Օրաթօրի»-ն (Hrant Dink Oratorio Contemporain) տեսաբերիզը, որուն հեղինակն է երգահան Մաթակ Թոշիկեան:

Վաքրֆլը Գիւղը Պարգեւատրուած



Կիլիկիոյ շրջանին մէջ գոյութիւնը մինչեւ օրս պահած միակ հայկական գաւառը հանդիսացող Վաքրֆլը գիւղ կը շարունակէ իր յաջողութիւններու շղթային նոր օղակներ աւելցնել:

Այսպէս Վաքրֆլը գիւղի յատկութիւնները նկատուած են հեռաւոր այլ գաւառէ մը, ուր «Կենդանի Քաղաքներու Հարթակ» անուն հասարակական կազմակերպութիւնը ամէն տարի կը նշէ բնակավայր մը, իբրեւ «Տարուայ գիւղը»:

Այս մասին յատուկ տուուցութեան հանդէս մը տեղի ունեցած է Արտահանի կուսակալութեան երդիկին տակ, որուն ներկայ գտնուած են «Սերհատի Զարգացման

Աժան»ը, Արտահանի Համալսարանը, Արտահանի Առեւտուրի եւ Արտադրութեան Կազմակերպութիւնը, Չըլտըրի գաւառապետը եւ քաղաքապետը:

Սամանտաղի հայ համայնքի պետ ճեմ Չափար կը յայտնէ թէ այս մրցանակին արժանանալով հպարտացած են: Նման մրցանակի տուուցութեան սատարողներ Անտիոքի երեւիտիան Հիւսէյին Եայման, Անտիոքի կուսակալ Ռահմի Տողան, «Տողաքա» հասարակական կազմակերպութեան ընդհանուր քարտուղար Օնուր Եըլտըզ եւ Լորա Չափարի յատուկ շնորհակալութիւն յայտնելով ընդգծեց անոնց աջակցութիւնը:

Ֆրանսահայ Երգչուհին Հիացում Պատճառեց

Ամէն տարուն պէս այս տարի եւս Ֆրանսայի մէջ տեղի ունեցաւ «Զայնը» անունով երաժշտական, նախագիծը, տարուան լաւագոյն երգիչն ու երգչուհին ընտրելու:

13 Մարտին հանդէս եկաւ Ֆրանսահայ Երգչուհի Անահիտ Պոլսաճեան եւ մեկնաբանեց հայկական ժողովրդական «Հինգալա» երգը, կարգ մը տողեր երգեց նաեւ Ֆրանսերէն լեզուով:

Երգի ընթացքին դատակազմի անդամները, իրենց շունչը պահած

կ'ունկնդրէին Անահիտը, իրարու հարցնելով թէ ինչ լեզուով կ'երգէր մրցումի մասնակիցը: Երբ երգի հատուածի մը մէջ Անահիտ արտաբերեց «Արմէնի» բառը, դատակազմի անդամները, իրենց դէմքի արտայայտութեամբ գոհունակութիւն յայտնեցին եւ ապա յոտնկայս ծափահարեցին հայուհին:

Անահիտը 25 տարեկանին Հայաստանի ներգաղթած է Ֆրանսա: Ան ծնած է երաժիշտներու ընտանիքի մէջ:

Արեւելքը Արեւմուտքին Կապող Մետաքսի Նոր Ճամբան Եւ... Հայերը



Վայոց Ձորին մէջ, Օրբելեաններու կարաւանատունը, որ իբրեւ իջեւան ծառայած է Մետաքսի ճամբուն՝ Հայաստանէն անցնող առեւտրականներուն համար

ՎԱՐՈՒԺ ԹԵՆՊԵԼԵԱՆ

Հին ժամանակներէն ի վեր Հայաստան գտնուած է Պարսկաստանի (Իրանի), Հռոմի, Բիւզանդիոնի, արաբական եւ օսմանեան կայսրութիւններուն միջեւ: Այս բոլոր կայսրութիւնները գրեթէ մնայուն կերպով ճնշած են հայ ժողովուրդը, եւ այդ ճնշումին գոլգոհեղ ձեւաւորուած է Հայոց պատմութիւնը եւ միաժամանակ՝ առեւտրական հայը, որուն վաճառականական ուղեւորութիւնները սերտորէն կապուած են այս նոյն կայսրութիւններու պատմութեան հետ: Միւս կողմէ, հայերը միաժամանակ գտնուելով այս կայսրութիւններու խաչմերուկին վրայ, կանուխէն տալիս առեւտրական Մետաքսի ճամբան եւ պետականաշինութեամբ զբաղելու փոխարէն, պարտադրաբար (կամ կամովին) ընտրած են առեւտուրը եւ նոյնիսկ դարձած Մետաքսի ճամբուն ուղեւորներ:

Ինչո՞ւ այս մոտաւոր եւ այս չիչեցումները:

Վերջին տասնամեակին, Մետաքսի ճամբան՝ վերանորոգ բնույթով եւ հեռանկարներով, մեծ կարեւորութիւն սկսած է ներկայացնել օրէ օր աշխարհի հզօրագոյն պետութիւններէն մէկը դարձող Չինաստանի համար: Մետաքսի ճամբան կը ներկայացնէ ցամաքային այն ուղիները Եւրոպայի եւ Ասիոյ մէջ, որոնք կ'օգտագործուէին հին եւ միջին դարերու վաճառականներուն կողմէ՝ ուղևորվ կամ ձիով մետաքս եւ այլ ապրանքներ փոխադրելու Չինաստանէն, Միջին Արեւելքէն, Պարսկաստանէն եւ Հռոմէական կայսրութենէն:

Մետաքսի ճամբան վերակենդանացնելու պաշտօնական շարժարարութիւնը կատարուեցաւ 2013-ին, երբ Չինաստանի իշխանութիւնները հրապարակեցին «Գօտի եւ ճանապարհ» նախաձեռնութիւնը, որ կը հետապնդէ Եւրոպան, Ասիան եւ Ափրիկէն իրարու կապող ենթակառուցներու ստեղծումը: Մինչեւ հիմա, այդ նախաձեռնութիւնը ներգրաւած է աւելի քան 100 երկիր:

Կը ծագի այն մտածումը, որ արդեօք աշխարհաքաղաքական մեր մտածողութեան մէջ (եթէ անշուշտ օր մը նման բան սկսի ձեւաւորուիլ մեր իրականութեան մէջ), կարելի պիտի ըլլա՞յ Մետաքսի ճամբուն մեր հեռավոր ու մօտիկ անցեալի «դրամազուխը» ներդնել Չինաստանի հետ հետզհետէ զարգացող մեր յարաբերութիւններուն մէջ: Բնականօրէն, տակաւին չունինք ասոր պատասխանը, բայց պիտի փորձենք քայլել պատմութեան հետքերով եւ սերտել մետաքսի ճամբուն հետ մեր առնչութիւնը թէ՛ Հայաստանի Հանրապետութեան եւ թէ՛ հայրենամերձ հայկական գաղութներուն պարագային, որոնք կազմուած են Մետաքսի ճամբուն վրայ գտնուող վերոնշեալ հին թէ նոր կայսրութիւններուն մէջ:

Կը սկսինք գաղութներով՝ Իրան, Լիբանան եւ Սուրիա՝ Հայաստանի պարագան ներկայացնելով առանձին:

Ի դէպ, 7-11 Յունուար 2019-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ տեղի ունեցած է Մետաքսի ճամբուն նուիրուած խորհրդակցական հանդիպում մը՝ Չինաստանի Մինչու համալսարանին եւ Չուիցերիոյ «ԱՅԱԲէ» հիմնարկին նախաձեռնած մէջ ուսումնասիրութեան շրջագիծին մէջ: Ծրագիրը առաջարկուած է Չինաստանի կառավարութեան կողմէ եւ անոր նպատակը եղած է քննել կրօններուն ազդեցութիւնը Մետաքսի ճամբուն առեւտրական յարաբերութեան վրայ: Նկատի ունենալով Մերձավայր Արեւելքի մէջ հայ եկեղեցու կապն ու չիվումը բոլոր մշակութիւններուն հետ, նախաձեռնողները դիմած են Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ առաջարկած անոր հիւրընկալութիւնը ու մասնակցութիւնը նշեալ ուսումնասիրութեան: Չին մասնագէտներուն կողքին, սոյն խորհրդակցող լին իրենց մասնակցութիւնը բերած են Լիբանանէն եւ Ֆրանսայէն հայ եւ օտար մասնագէտներ:

Մետաքսի ճամբուն զարգացման մեծապէս նպաստած են Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ քաղաքական ու տնտեսական յարաբերութիւններու ամրապնդումը, եւրոպական շրջանի տնտեսական աճը եւ Արեւելքէն եկող ապրանքներու մեծ պահանջը: Իսկ հայ պատմագրութեան համաձայն, հայերը առնչակից դարձած են Մետաքսի ճամբուն, երբ կարիքը զգացուած է առեւտրական միջնորդներու հայերը ճանչցուած են իրենց հնարամտութեամբ եւ աշխարհագրական շարժունակութեամբ: Միշտ մեր պատմագրութեան համաձայն, Ասիոյ ճամբուն վրայ բնակող քրիստոնեայ հայերը ամէնէն յարմար առեւտրական բանալիները նկատուած են եւրոպացիներուն համար:

Հայերը կը համարուէին խաղաղասէր եւ հակուած էին խուսափելու հարցեր ստեղծելէ, եւ այդպիսով հայ վաճառականները կը դառնային առանցքային միջնորդներ Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ, մասնաւորաբար կարաւանային առեւտուրին մէջ:

Հայկական միջ-շրջանային կապերու անկիւնադարձային թուական կը նկատուի 17-րդ դարը, երբ Պարսկաստանի իշխանաւոր Շահ Աբբասը (1587-1629) բռնի Նոր Ջուղա փոխադրած հայ վաճառականներուն մեծաշնորհ կու տայ պարսկական հում մետաքս վաճառելու այլ երկիրներու մէջ: Ծանօթ է, որ հայերը այս առեւտուրին մէջ մնացած են մինչեւ 20-րդ դարու սկիզբը, երբ արդէն անկա Նոր Ջուղայի վրայով տարածուած էր եւ ցամաքային ու ծովային ցանցերով հասած Արեւելեան եւ Արեւմտեան Եւրոպա, Հնդկաստան, Կեդրոնական Ասիա, Սուրիա, Լիբանան, Ռուսիա եւ Միջին ու Ծայրագոյն Արեւելք: Ըստ բանասէր Արծուի Բախչինեանի, այս «աշխարհագրականօրէն ընդարձակ առեւտրական ներկայութիւնը կարելի է բնութագրել որպէս գաղութացում, քաղաքացիութիւն չունեցող եւ մասնագիտութեամբ բնութագրուող ազգի մի կայսրութիւնը»:

Այսպէս կոչուած առեւտրական կայսրութիւնը եւ հայ գաղութներու ցանցերը մասամբ կը վերապրին Հայոց ցեղասպանութիւնը: Հայերու բռնի տեղահանութիւնը դէպի Սուրիա կը լանդի նոր գաղութներու ձեւաւորման Սուրիոյ եւ Լիբանանի մէջ: Մինչ Իրանի արդէն իսկ աշխուժ հայ գաղութը կը հարստանայ նոր արիւնով՝ մասնաւորաբար 1920-էն ետք: Ոչ-պաշտօնական դիւստտներու համաձայն, այսօր աշխարհի տարածքին ապրող հայերուն ընդհանուր թիւը կը գնահատուի 10 միլիոնով: Արտերկրի գաղութներուն մէջ կ'ապրին շուրջ 7 միլիոն հայեր, տարածուած՝ Ռուսիոյ, Մ. Նահանգներու, Ֆրանսայի, Իրանի, Սուրիոյ, Լիբանանի, Յունաստանի, Թուրքիոյ, Ուկրաինոյ, Ռումանիոյ, Գանատայի, Եգիպտոսի եւ Աւստրալիոյ մէջ ու այլուր՝ աւելի փոքր թիւերով:

Այժմ փորձենք ներկայացնել Չինաստանի հետաքրքրութիւնը Իրանի, Լիբանանի եւ Սուրիոյ նկատմամբ, ուր գոյութիւն ունին ուժեղ եւ աշխուժ հայկական գաղութներ:

Ծովային ելքերու կողքին, Իրան ցամաքային սահմաններ ունի 15 երկիրներու հետ եւ, ինչպէս կը տեղեկացուի, կարեւոր դեր կը խաղայ «Գօտի եւ ճանապարհ»-նոր մետաքսի ճամբուն նախաձեռնութեան մէջ՝ իբրեւ ուժանիւթի կեդրոն եւ Միջին Արեւելքն ու Եւրասիան կապող թրանզիթ ուղի:

2016-ին, Իրան եւ Չինաստան կը կնքեն համաձայնագիր մը, որուն հիմամբ ոչ միայն կ'որդեգրեն «համապարփակ ռազմավարական գործընկերութեան» սկզբունքը, այլեւ կ'որոշեն սերտօրէն գործակցիլ նոր մետաքսի ճամբան կառուցելու աշխատանքներուն մէջ:

Իրանի հայ գաղութը, հակառակ արտագաղթին, կը շարունակէ մնալ իբրեւ կենսունակ համայնք: Իրանի մէջ ապրող հայերուն թիւը կը տարբերի 70.000-էն 100,000-ի միջեւ: Անոնք կը բնակին ընդհանրապէս Թաւրիզի, Թեհրանի եւ Նոր Ջուղայի մէջ:

Նոր Ջուղայի հայ առեւտրականները մասնաւորաբար, մեր

պատմագիրներուն վկայութեամբ, անգնահատելի դեր ունեցած են մեր պատմութեան մէջ: Թափառելով Ռուսիոյ, Եւրոպայի, Պարսկաստանի, Սուրիոյ, Հնդկաստանի եւ Չինաստանի մէջ մնալով դարձած են օղակ մը Եւրոպայի, Ասիոյ եւ Արեւելքի միջեւ՝ խթանելով հայ-ռուսական, հայ-իրանական եւ եւրոպական երկիրներու հետ յարաբերութիւններու ամրապնդումն ու զարգացումը:

20-րդ դարուն, Իրանեան իրականութեան մէջ, հայկական մշակութային եւ տնտեսական ներդրումը մեծապէս կը գնահատուի: Իրանցիք հայերուն իրաւունք տուած են կազմակերպելու իրենց ազգային կեանքը, ազատօրէն դաւանելու իրենց կրօնը, կառուցելու եկեղեցիներ, սորվելու մայրենի լեզուն եւ զարգացնելու իրենց ազգային մշակոյթը:

Ինչ կը վերաբերի Լիբանանի, վերջին տարիներուն չինական ընկերութիւններ սկսած են մեծ հետաքրքրութիւն ցուցաբերել նոր նկատմամբ՝ իբրեւ Միջերկրականի վրայ էլք եւ Սուրիոյ վերականուցման համար կարեւոր դրացի երկիր:

2017-ին, Լիբանանի մէջ Չինաստանի դեսպանը LAU համալսարանին մէջ տուած իր մէկ դասախօսութեան ընթացքին շեշտած է Լիբանանի կարեւորութիւնը Մետաքսի ճամբուն վրայ՝ իբրեւ անցք Ասիոյ եւ Եւրոպայի միջեւ: Տակաւին, նոյն տարին, Լիբանանի տնտեսութեան նախարարը Չինաստանի մէջ ստորագրած է Մետաքսի ճամբուն վրայ տնտեսական գօտիի ստեղծման վերաբերող համադրածակցութեան երկկողմանի յուշագիր մը:

Նոր Մետաքսի ճամբուն առնչուած այս երկրին մէջ, հայ համայնքը ունի երկար եւ հարուստ պատմութիւն մը: Հայերը դարեր շարունակ ներկայութիւն եղած են Լիբանանի մէջ: Այսօր Լիբանանի մէջ կ'ապրին աւելի քան 100.000 հայեր, թէեւ Լիբանանի քաղաքացիական պատերազմէն առաջ այդ թիւը կը գնահատուէր աւելի քան 250 հազար:

Ճիշդ է որ պետական կառուցներուն մէջ ներկայացուցչութիւնը հայերուն կու տայ պատկանելութեան կարեւոր զգացում մը, սակայն համայնքին ուժը հիմնականօրէն կը կայանայ կրօնական, կրթական եւ ընկերային սեփական հաստատութիւններ ունենալու իրողութեան մէջ: Լիբանանահայ գաղութին մէջ փաստօրէն կը գործեն 3 օրակաթեր, քանի մը հայկական ուսումնական, մօտաւորապէս 27 նախակրթական եւ երկրորդական դպրոց, 1 համալսարան եւ 29 եկեղեցի:

Գալով Սուրիոյ, 2016-էն ի վեր, Չինաստան աւելի սերտօրէն ներգրաւուած է յամեցող պատերազմին կարգաւորման ճիգերուն մէջ՝ հետազային տնտեսական դեր վերցնելու եւ մասնաւորաբար վերականգնման գործընթացին մէջ բաժնի ունենալու ակնկալութեամբ: Սուրիոյ վերականգնումը պիտի արժէ աւելի քան հարիւր միլիարտալար, իսկ Չինաստան կ'ուզէ կարկանդակի իր բաժինը վերցնել:

Չինաստանի համար Սուրիա կը ներկայացնէ աշխարհառաջամտարական արժէք մը ոչ միայն մետաքսի նոր ճամբուն վրայ դէպի Միջերկրական եւ Ափրիկէ անոր ունեցած կարեւոր դիրքին համար,

Հարիւրամեակ Ամերիկեան Ափերուն Ալեք Մանուկեան Ազգային Մեծ Բարերարը

«Ես բախտաւոր անձ մը եղած եմ» կ'ըստի, առանց մտայնելու իր անասնաման կարողութեանց եւ կորովի ազգասիրութեան անունով մախածեցնած պատասխանատու եւ վճռական քայլերը: Պրն. Մանուկեան, կ'ըստի, բախտը ինքնիրեն չի գար, միայն յարատեւ աշխատանքով կը տիրանանք անոր: Կը ժպտէր, ու այդ գեղադէմ ժպիտը կապտաւուն աչքերէն գոհունակութեան ալիք մը կ'ուրուագէր իր հայրական դէմքին շուրջ:

ԴՊԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔՅԱՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՍ

Հարիւրամեակ

Հարիւր տարիներ առաջ Իգմիրէն, քաղաքի թրքական անարգ հրկիզումէն երկու տարի առաջ, Նախախնամութեան կանչով, 1920 թուին ծովու ճամբով Միացեալ Նահանգներ կը հասնէր 19-ամեայ երիտասարդ Ալեք Մանուկեան, անորոշ ու անփորձ, յիսուն տողար գրպանին մէջ, ետին ձգելով իր բարեպաշտ ծնողքը՝ Թագուհին ու Թագուհին, երկու եղբայրներն ու երկու քոյրերը, դառնալու համար 20-րդ դարու հայ ազգին պարծանքը, Հ.Բ.Լ.Միութեան անգուգական Նախագահն ու մեծագոյն բարերարը: Կը թողուր նաեւ իր սիրած Հայ Եկեղեցին, ուր որպէս դպիր եւ ապա որպէս սարկաւազ ծառայած էր: Ներկալ տարուան Յունիսին պիտի նշենք իր ծննդեան 120-ամեակը՝ Յունիս 28, 1901: Ընտանիքէն բաժնուելու յուզումնալից դէպքը պատմած է նաեւ ինծի, երբ որոշած ըլլալով մեկնել, չէր կրցած գալն յայտնել իր ծնողաց մինչեւ այն ատեն երբ մայրը նկատած էր իր որդւոյն տիրամած եւ մտահոգ օրերը: Պարտքի բարձր գիտակցութեանը կը գրեմ հետեւեալ տողերը իբրեւ ակնատես հոգեւորական երբ ձմրան եղանակին ամէն տարի Տ. եւ Տիկ. Ալեք եւ Մարի Մանուկեան Տիթրոյիթէն Ֆլորիտա իրենց բնակարանը կը ժամանէին եւ կ'այցելէին իրենց սիրած Հայաստան-եաց Ս. Դաւիթ Եկեղեցին որուն հիմնադիր հովիւը կարգուած էր 1984 թուին: Պրն. Մանուկեանի մեծութիւնը իր համեստութեան մէջ կը կայանար երբ կը հեռաձայնէր թէ եկեղեցւոյ գրասենեակը պիտի գար, եւ մի քանի առիթներով ալ Երէնցկին ձօշոնն ու ես իրենց հիւրը պիտի ըլլայինք անձնական նաւակով շրջապտոյտի ընթացքին:



Քիպիլին հայրողիներու աչքին, «արժան եւ իրաւ» միայն պիտի ըսէինք բոլորս միաբերան՝ խորին յարգանքով:

Պատմական Անկիւնադարձ

Արդարօրէն թէ՛ իր անձին, ընտանեկան կեանքին, ապագայ բարերարութեանց, եւ թէ՛ ազգային երկնակամարին վրայ Ալեք Մանուկեան փայլեցաւ որպէս անցեալ դարու գլխաւոր աստղը հայրենիքի ու գաղթի շահարհի ընծայած անանխընթաց բարեգործութիւններով: Ինչ հետ ամէն հայրողի համոզումով պիտի վկայէ թէ Նախագահ Ալեք Մանուկեան ապագայի պատկանելի գործունէութեան լոյսին տակ պատիւ եւ շնորհ պարգեւեց ՀԲԼ Միութեան ու անոր միջոցաւ հայրենիքին, Հայ Եկեղեցւոյ Նուիրապետական Աթոռներուն ու մասնաւորաբար սփիւռքի հայութեան կրթական եւ մտաւորական վերականգնումին:

Իր նախագահութեան ներքեւ հայ ուսումնական հաստատութիւններ ունեցան, տասնեակներով իրենց անուններով յայտնի վարժարաններ իր միջոցաւ գոյացան ու բարեկարգ մնացին աշխատանքի բոլոր հայ համայնքներէն ներս անխտիր: Այդ վարժարաններէն եւ ոչ մին փակեց իր դռները իր բաց աչքերուն առջեւ, ինք հասնելով կամ հասցնելով նիւթական ամէն աջակցութիւն: Ժպիտը դէմքին անձամբ այցելեց զոյգ Ամերիկաներն ու Եւրոպական հայ գաղթածախները, հեռաւոր Աւստրալիա, Հայաստան ու Մերձաւոր Արեւելք:

Նախագահ ԳԲԼ Միութեան

ՀԲԼ Միութեան կեդրոնը 1940 թուին Փարիզէն Նիւ Եորք կը փոխադրուէր Նախագահ Արշակ Գարակեօզեանի օրով եւ տասնամեակ մը վերջ իր հրաժարականին վրայ Միութեան 40-րդ Համագումարը 5-րդ Նախագահ կ'ընտրէր Ալեք Մանուկեան 1953 Դեկտեմբեր 12-ին, իրեն աջակից ընտրելով 12 հոգինոց կեդրոնական վարչութեան անդամները: Մանուկեան 36 երկար ու բեղմնաւոր տարիներ կը վարէր իր շատ պատահալիկաբար պաշտօնը, նախապէս ըլլալով Միութեան վարչականներէն մին իր անխոցելի նկարագրով, բարձր առաքինութիւններով, ազգասիրութեամբ, եկեղեցա-

սիրութեամբ եւ կրթասիրութեամբ: Ալեք եւ Տիկին Մարի Մանուկեաններ իրենց բարերարութիւններով շուտով յայտնի կը դառնային կողքին մնալով նորընտիր Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգէն Ա կաթողիկոսին որուն լիակատար վաստակութիւնը կը վայելէին: Մայր Աթոռի մէջ իրենց անունով թանգարան մը եւ Երուսաղէմի Պատրիարքութեան նորաշէն ժառանգաւորաց եւ Ընծայարանի մասնաշէնքը կառուցանել կուտային որոնց բացման հանդիսութեանց էջմիածնի եւ Երուսաղէմի մէջ Վեհափառ Հարապետն ու Տ. եւ Տիկ. Մանուկեաններ ներկայ կ'ըլլային: Ամենայն Հայոց կաթողիկոսի կոչին անսալով Երուսաղէմէն կողոպտուած 23 մագաղաթեայ ձեռագիրներու վաճառքի մեծ վտանգին փրկագիրը Ալեք Մանուկեան անձամբ Լոստոն երթալով ինք կը վճարէր ու ձեռագիրները ապահով վանք վերադարձնել կուտար յանուն Ամենայն Հայոց կաթողիկոսին ու հայ ժողովուրդին՝ սրբելով սեւ մուրը օրուան վանական անպատասխանատու հոգեւորականներու ճակատին:

Իր նախագահութեան 36-ամեայ տարիներու լրումին յետագարձ ակնարկով մը իր 88 տարիքին Ալեք Մանուկեան կը գրէր թէ «մեր հաւատաւոր անդամակցութիւնն ու ժողովուրդը 1953-ին մեզի բախտը ընծայեց մեր խոնարհ ուժերով ծառայելու Պօղոս Նուպար Փաշայեան վաստակով նուիրականացած Միութեան նախագահական ատոնին՝ պաշտօն որ կը նկատենք ազգային ջերմեռանդ պարտաւորութիւն մը, պատիւ մը, եւ հաճոյք մը»: Նախագահ Ալեք Մանուկեան իր բարձր պաշտօնի հմայքով կարողացաւ Միութեան 8 միլիոն տոլարի հիմնադրամը 1954-էն սկսեալ բարձրացնել 50 միլիոն տոլարի:

13 Վարժարաններ եւ 10 Կեդրոններ

Իր բազմաթիւ հայ կեդրոններու կառուցման շարքին շրջատակելի պիտի մնայ իր ծնողաց Թագուհի եւ Թագուհիի շրջատակելի կառուցած ծերանոցը Միջիկըն նահանգին մէջ, ինչպէս նաեւ Տիթրոյիթի Ս. Յովհաննէս Մկրտիչ հոյակապ եկեղեցիին ու համալիրին բերած իր նիւթական ու բարոյական կարեւոր մասնակցութիւնը: Հայկական սփիւռքը անկասկած իր հոգածութեան առաջին առարկան եղաւ ուր հայ երկրորդական վարժարաններ հիմնեց որպէս իսկական շարունակութիւնը Կիպրոսի Մեթրոնէս կրթական Հաստատութեան, ինչպէս Պէյրութի Յովհաննէս-Մանուկեան, Դարուհի Յակոբեան, Հալէպի Լազար Նաճարեան, եւ Գալիֆոքիոյ Մանուկեան-Տէմիլճեան երկրորդական վարժարանները: Նախակրթարաններու հիմնարկութեան եւ կառուցման շարքին կրցած եմ ցանկագրել 13 նախակրթարաններ, եւ մշակութային ու մարզական 10 կեդրոններ, բոլորն ալ յանուանէ յիշուած իրենց տարբեր երկիրներու հայահոգ գաղութներէն ներս: Դպրոցաշէնքերուն վերջինը իր վախճանովէն ամիսներ առաջ կառուցուեցաւ Պրն. Մանուկեանի բարերարութեամբ, երբ արդէն

Տիկին Մարի Մանուկեան վախճանած էր 1993-ին, որպէս Ֆլորիտայի առաջին եւ միակ դպրոցաշէնքը Ս. Դաւիթ Հայ Եկեղեցւոյ կալուածին վրայ՝ խնդրանքովը եկեղեցւոյ հոգեւոր հովիւ եւ տողերս գրող Հայր Զաւէն Արզումանեանի: Ֆլորիտայի «Ալեք եւ Մարի Մանուկեան» վարժարանին հիմնարկէքը 1996 թուի Փետրուարին կատարեց Երջանկայիշատակ Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը, Առաջնորդ Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանի հետ եւ Տիար Ալեք Մանուկեանի ներկայութեան: Մեծ Բարերարը վախճանեցաւ Յուլիս 10, 1996-ին ու չհասաւ տեսնելու բացման արարողութիւնը զոր մենք հանդիսաւորապէս կատարեցինք հոկտեմբերին:

Տիրոջից Դաստատուած

Ալեք Մանուկեանի բովանակ կեանքը Միջիկըն նահանգի Տիթրոյիթ քաղաքը եղած է ուր սորվեցաւ, սորվեցուց ու հաստատեց իր միջազգային ճանաչողութիւն ունեցող ճարտարարուեստի MASCO հոշականուն հաստատութիւնը: 1924 թուին իր անունը կապեց այդ քաղաքին հետ, փորձառութիւն ձեռք ձգեց ինքնաշարժի կառուցման, յատկապէս ներքին մասերու եւ գործիքներու գծագրութեան եւ յորինումին մէջ: Ծատ չանցած 1929-ին ան արդէն հիմնեց իր անձնական ընկերութիւնը արդիական ծորակներու հնարումով որ իսկոյն տարածուն շուկայ գտաւ Ամերիկայի եւ աշխարհի չորս ծագերուն՝ տարեկան երեք պիլիոն տողարի առուծախով: Իր այս բացառիկ յաջողութիւնը Ալեք Մանուկեան կը պարտէր իր ուշիմութեան, անխոնջ աշխատանքին, պարկեշտ գործառնութեանց, պայծառ միտքին եւ յարատեւ լաւատեսութեան:

85-ամեակ եւ 95-ամեակ

Ալեք Մանուկեանի ծննդեան 85-ամեակին հաւաքուած էինք Տիթրոյիթ նշելու Բարերարին տարեդարձը: Կիրակի օր Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցւոյ մէջ զմայլեցանք տեսնելով Ալեք Մարկաւազ Մանուկեան որ եպիսկոպոսական պատարագին շապիկով եւ ուրարով ընծաներու վերաբերմով կը կատարէր: Իսկ 95-ամեակին դարձեալ ներկայ գտնուեցանք իր պատկանելի տարեդարձին, եւ աւաղ նոյն տարուան Յուլիսին կրկին մասնակցեցանք նոյն եկեղեցւոյ մէջ, այս անգամ իր յուրարկաւորութեան, նախագահութեամբ Նորին Սրբութիւն Տ.Տ. Գարեգին Ա Սարգիսեան Ամենայն Հայոց կաթողիկոսին, իր շուրջն ունենալով Մայր Աթոռէն, Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկայէն ու Գանատայէն թեմակալ վեց Առաջնորդներն ու բազմաթիւ հոգեւորականներ: Յետագային Տ.Տ. Գարեգին Բ Ներսիսեան Ամենայն Հայոց կաթողիկոսի եւ հայրենի պետութեան տնօրինութեամբ Ալեք եւ Մարի Մանուկեաններու դագաղները պետական պատուով եւ հանդիսաւորութեամբ Տիթրոյիթէն Մայր Աթոռ Ս. էջմիածին փոխադրուեցան ու հանգչեցան իրենց անուամբ կառուցուած Թանգարանին դիմաց:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին Massis2@earthlink.net (626) 797-7680

Արտահերթ Ընտրութիւնների Շուրջ

Շարունակուած էջ 2-էն

«Ընտրական օրէնագրքի» փոփոխութիւնից առաջ, թէ յետոյ: Ինչպէս յայտնի է՝ Աժ-ուծ շրջանառութեան մէջ է գրուել «Ընտրական օրէնագրքի» փոփոխութիւնների փաթեթը: Եւ բազմաթիւ ուժեղ ու զործիւններ պնդում են, որ սխալ է ընտրութիւնների գնալ՝ մինչ այդ փոփոխութիւնների ընդունումը:

«Առանց ընտրական օրէնագրքի փոփոխութեան անցկացուող ընտրութիւնները հերթական եւ բաւականին ուժեղ հարուած կը լինի 18 թուականին սկիզբ առած յեղափոխական գործընթացներին ու, ընդհանրապէս, ժողովրդավարութեանը»,- ֆեյսբուքեան իր էջում գրել է «Քաղաքացու Որոշում» կուսակցութեան ղեկավար մարմնի անդամ Սուրէն Սահակեանը:

Սա այն հարցն է, որի վերաբերեալ միասնական դիրքորոշում չկայ նոյնիսկ «Իմ Քայլի» ներսում: «Ընտրական օրէնագրքի» փոփոխութիւնները համակարգող խմբի անդամ, «Իմ Քայլ» խմբակցութեան պատգամաւոր Համազասպ Դանիէլեանի կարծիքն, օրինակ, այս հարցում գրեթէ նոյնական է Սուրէն Սահակեանի հետ:

Դանիէլեանը բազմիցս, այդ թւում մեզ հետ զրոյցում ընդգծել է, որ առանց «Ընտրական օրէնագրքի» փոփոխելու կայացած արտահերթ ընտրութիւնները կը լինեն բաց թողնուած հնարաւորութիւն: Նրա համոզմամբ՝ նոր օրէնագրքը նպաստելու է՝ ունենալ աւելի

լի ազատ եւ ժողովրդավարական ընտրութիւններ: Դանիէլեանը կողմ է մի քանի ամիս աւելի ուշ ընտրութիւններ անցկացնելուն, բայց բարելաւուած օրէնագրքով:

Այս առումով առանցքային փոփոխութիւնը, ինչպէս տեղեկացրել ենք, ընտրակարգի փոփոխութիւնն է: Փոփոխութիւնների նախագծում առաջարկուած է ռեյտինգային ընտրակարգը փոխարինել փակ համամասնականով: Բացի այդ, կարելոր է համարուած նաեւ անցողիկ արգելապատնէչի փոփոխութիւնը, բոնուսային համակարգի վերացումը եւ այլն:

Իսկ ահա «Իմ Քայլից» Վիկտոր Ենգիբարեանը «Արարատ» ակումբում հրաւիրուած ասուլիսում յայտարարեց. «Մենք պատրաստ ենք գնալ ընտրութիւնների ե՛լ տարածքային ցուցակներով՝ այսինքն ռեյտինգային ընտրակարգով, ե՛լ փակ համամասնական ընտրակարգով: Մենք կրկին ուզում ենք, որ բոլոր քաղաքական ուժերը անեն յայտարարութիւն, թէ իրենք ինչպիսի ընտրակարգով են ցանկանում գնալ ընտրութիւնների: Երբ որ մենք տեսնենք, որ քաղաքական դաշտը այնուամենայնիւ նախընտրում է այս կամ այն տարբերակը, մենք դա անպայման հաշուի կ'առնենք»:

Ենգիբարեանն ընդգծեց՝ դա կարելոր է, որպէսզի չլինի այնպէս, որ ընտրութիւններից առաջ կամ յետոյ որեւէ քաղաքական ուժ յայտարարի, թէ իշխանութիւններն իրենց կարծիքը չեն հարցրել: «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿ»

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿ»

Արեւելքը Արեւմուտքին Կապող

Շարունակուած էջ 12-էն

այլեւ որովհետեւ Սուրիա կը գտնուի իր ուժանիւթի աղբիւրներուն՝ իրաքի եւ Ծոցի երկիրներուն թիկունքին:

Հայկազը կը գտնուէր Մետաքսի ճամբուն սրտին վրայ, այն ճամբան, որ կու գար Զինաստանէն եւ Ծայրագոյն Արեւելքէն դէպի այն շրջանը, որ ներկայիս ծանօթ է իբրեւ Արեւմտեան Եւրոպա, նաեւ՝ համեմատուած ճամբան, որ կու գար Հնդկաստանի հեռուոր հարաւէն դէպի Եմէն, Հիփագ, Յորդանան, Լիբանան եւ ապա Հայկազն անցնելով կ'ուղուէր դէպի Սեւ ծով, Հայաստան կամ Կասպից ծով, կամ դէպի Պոլիս՝ Եւրոպա մտնելու համար:

Դեռ մօտիկ անցեալին, Հայկազի մէջ հայերու թիւը կը գնահատուէր շուրջ 220.000 հոգի: Հայերը Հայկազի մէջ կը վայելէն մշակութային լայն ինքնավարութիւն: Հայերը ունին ինքնուրոյն ընկերատնտեսական եւ արդիւնաբերական իրավիճակ:

Նոյնիսկ ցեղասպանութենէն առաջ, հայերը դարեւր առաջ բնակուելին հաստատած են Հայկազի մէջ: Ծանօթ է, որ Քառասնից Մանկանց առաքելական եկեղեցին, որ կառուցուած է 15-րդ դարուն, կը նկատուի սփիւռքի ամէնէն հին եկեղեցիներէն մէկը: Սակայն ցեղասպանութիւնը վերապրած հարաւոր տարագիրներու բնակեցումով էր, որ հիմը կը դրուէր Հայկազի ժամանակակից հայ համայնքին:

Իբրեւ եզրակացութիւն, կրնա՞նք ըսել, որ իրանի, Սուրիոյ եւ Լիբանանի հայ գաղութները կը համապատասխանեն մետաքսի ճամբան ժամանակակից ենթակառուցներով վերակենսաւորելու չինական հեռանկարներուն՝ միշտ ի մտի ունենալով, որ փոխադարձ ներգործութեան եւ մշակութային համագործակցութեան մէջ, մարդկային գործօնը կը մնայ յաջողութեան հիմնական տարրերէն մէկը տնտեսական այդ ճամբուն ձեւաւորման համար, որ կ'երկարի ու կը տարածուի թեհրանէն Լոնտոն եւ Պէյրիկէն Պէյրութ եւ Հայկազ, ապա՝ մինչեւ Գահիրէու Լակոս:

Հայ վաճառականները կամ առեւտրական միջնորդները, որոնք ժամանակին աշխույժ էին Մետաքսի հին ճամբուն վրայ, մերօրեայ չափանիշներով պիտի կարենա՞ն ցուցադրել նոյն ներուժը՝ վերցնելու մշակութային բազմաթիւ արգելքները, որոնք այլապէս կրնան խոչընդոտել Մետաքսի նոր ճամբուն գարգացումը՝ մշակութային այլազանութեան պատճառով:

Մետաքսի ճամբուն վրայ գտնուող բոլոր երկրներուն մէջ, ուր կան մեծ ու փոքր հայկական համայնքներ, անոնք կրնան խթանել համագործակցող ցանցերու ստեղծումը նախ հայ վաճառականներուն միջեւ, ապա՝ իրենց բնակած երկիրներու համաքաղաքացի վաճառականներուն հետ, ու այդ ցանցերը տարածուելով Մետաքսի ճամբու երկայնքին՝ դառնալ...աշխարհաքաղաքական ճնշումի լծակ: www.civilnet.com

Թուացեալ Յաղթանակի Պտուղները

Շարունակուած էջ 2-էն

նը, յստակ ժամանակացոյց չի սահմանում: Ռուսաստանի հետ վերջնական եւ մանրամասն համաձայնագիրը ստորագրելու վերջնաժամկէտ նոյնպէս չկայ: Յստակ սահմանուած դետալների ու ժամանակացուցի բացակայութիւնը վլադիմիր Փութինի հետ բանակցութիւններում, որը հիանալի է կարողանում օգտագործել նման բացերը, ատրպէյճանական դիւանագիտութեան մեծ սխալն էր»:

Հակամարտութեան չընձուած բնույթը մի կողմ դնելու ռեժիմի ցանկութիւնը յանգեցնում է անորոշութեան, եւ քաղաքացիական հասարակութիւնը պատասխաններ է պահանջում: Այս ամէնը գէնք է դարձել ատրպէյճանական ընդդիմադիր շարժումների (լիբերալներ, համաթուրքական ազգայնականներ եւ իսլամիստներ) ձեռքբերում, որոնք պաշտոնական լրատուամիջոցներ մուտք չունենալու պատճառով թեման ակտիւօրէն առաջ են մղում սոցիալական ցանցերում:

Պաքուս միաժամանակ ողբում են, որ յաղթանակը թուացեալ էր, եւ Ատրպէյճանն իրականում

մեծ պարտութիւն է կրել՝ ամբողջութեամբ յայտնուելով Ռուսաստանի ու Թուրքիայի վերահսկողութեան տակ: Ռուս-թուրքական մոնիտորինգի կեդրոնը, ինչպէս նաեւ տարածաշրջանում ուսումնական զորագասներին ներկայութիւնը Պաքուին գրկում են ինքնուրոյն որոշումների կայացման հնարաւորութիւնից: Աւելին՝ ատրպէյճանական կողմն այլեւս չի կարող խաղարկել ուսում-թուրքական տարածականութիւնները, ինչպէս Թուրքիան է օգտուում ՌԴ-Արեւմուտք հակասութիւններից: Պատճառը պարզ է՝ Թուրքերը գերադասում են միանգամից պայմանաւորուել ուսուների, այլ ոչ թէ ատրպէյճանցիների հետ:

Ատրպէյճանում անյուսուլթեան միջոցառում խորացնում է բազմազար մայրերի ողբը, որոնք դեռ սպասում են իրենց որդիների վերադարձին: Յաղթանակի մասին Ալիեւի բարձրագոյն յայտարարութիւնները սոսկ ազգային գործօնի խաղարկմամբ դժգոհների հաշուհարդարից խուսափելու նպատակ են հետապնդում: Արդեօք երկա՞ր կը տւելի...:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

Մանուկ Յենրիկը Որպէս Կօշիկ Նորոգող

Շարունակուած էջ 13-էն

վարպետ Աւոն միայնակ էր ապրում երկչարկանի հսկայ տան մէջ: Որոշ ժամանակ անց յայտնի դարձաւ, որ գողերը թալանել են իմ վարպետի բնակարանը եւ իրենց հետ տարել նաեւ պատերից մէկի մէջ թաքցրած մեծաքանակ ոսկեղէնն ու գո-

հարեղէնը: Ամէն պարագայի ես երախտապարտ եմ իմ վարպետ Աւոյին, որի ձեռքի տակ արհեստ սովորեցի, եւ, եւ ամենակարեւորը. 7-8 տարեկան հասակում իսկ՝ ըմբռնեցի աշխատանքի, կեանքի իմաստը եւ հասկացայ, թէ որքան դժուար է արդար քրտինքով դրամ վաստակելը:

Advertisement for Garine Depoyan, Notary Public. Includes address: 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104, phone: (626) 797-7680, and website: www.garine.net

Advertisement for Garine Depoyan, Notary Public, Member of the National Notary Association. Includes address: 554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106, phone: 626-755-4773, email: ghdepoyan@gmail.com

Advertisement for SIFA48U4U (ՅԱՒԱԿՑԱԿԱՆ) offering legal services for inheritance and property issues. Contact: Ան ԱՀԻՏ ԳԹԸՅԵԱՆԻ մահուան առթիւ Տիկ. Էօթէնի Պարսումեան իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ամուսնոյն՝ Սահակ ԳթըՖեանին, գաւակներուն եւ համայն հարազատներուն: Առ այդ \$100 կը նուիրէ «Մասիս»ին:

ՊՍԺ ԵՆ «ԼԻՎԵՐՓՈՒԼ»ՋԱՍԱՆ ԱԽՈՅԵԱՆՆԵՐՈՒ ԼԻԿԱՅԻ ՔԱՌՈՐԴ ԵԳՐԱՓԱԿԻՅ

Ֆրանսայի եւ Անգլիոյ գործող ախոյեանները՝ ՊՍԺ-ն եւ «Լիվերփուլը», հասան Եւրոպայի Ախոյեաններու Լիկայի քառորդ եզրափակիչ:

ՊՍԺ-ն փարիզի մէջ ընդունելով «Պարսելտնային» հանդիպումը աւարտեց ոչ-ոքի՝ 1:1: Քաթարական ակումբէն միակ գնդակը խփեց Լիոնել Մեսսին, իսկ ՊՍԺ-էն՝ Կիլիան Մբայէն: Խումբերու առաջին խաղին «Պարսելտնային» պարտուած էր 4:1 արդիւնքով: Այսպիսով ՊՍԺ հասաւ Ախոյեաններու Լիկայի քառորդ եզրափակիչ:

ROUND OF 16 DRAW			
MONSIEUR DRETTACH VS MAN. CITY			
LAZIO VS BAYERN			
ATLETICO VS CHELSEA			
LEIZIG VS LIVERPOOL			
PORTO VS JUVENTUS			
BARCELONA VS PARIS			
SEVILLA VS DORTMUND			
ATALANTA VS REAL MADRID			

Օրուան միւս խաղին Անգլիայի ախոյեան «Լիվերփուլը» սեփական յարկի տակ ընդունելով գերմանական «Լայպցիգին» յաղթեց 2:0 արդիւնքով եւ կը շարունակէ պայքարը ՉԼ ախոյեանութեան համար:

«ՄԱՆՇԵՍՏԵՐ ԵՈՒՆԱՅԵՐԸ» ՈՒԾԵՂ ԵՐ «ՈՒՆԵՍ ԶԵՄԷՆ»

Անգլիոյ առաջնութեան 28-րդ հանգրուանին «Մանչեսթըր Եունայթըդը» ընդունեց «Ուեսթ Հեմին»: Նորուկիացի Ուլիս-Գունար Սուլշերի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ նուազագոյն արդիւնքով:

Ինքնակոլի հեղինակ դարձաւ «Ուեսթ Հեմի» անգլիացի պաշտպան Կրէյկ թոուսընը:

«Մանչեսթըր Եունայթեթը» (29 խաղ) 57 կէտով կը գրաւէ երկրորդ տեղը եւ 1 կէտով առաջ է երրորդ տեղը գրաւող «Լեսթեր Սիթիին» (29 խաղ): «Ուեսթ Հեմ» (28 խաղ) 5-րդն է՝ 48 միաւոր: Առաջատար «Մանչեսթըր Սիթիին» 30 խաղէն յետոյ ունի 71 կէտ:

«ԱՐՍԵՆԱԼ» ՊԱՐՏՈՒՔԵԱՆ ՄԱՏՈՆԵՑ «ԹՈՔԵՆԻՏԻՆ»

Անգլիոյ ֆութպոլի առաջնութեան 28-րդ հանգրուանի մրցումներու ծիրէն ներս մրցեցան «Արսենալը» եւ «Տոթենհեմը»:

Լոնտոնի մէջ կայացած խաղին «գինագործները» առաւելութեան հասան 2:1 արդիւնքով: Մարտին Էդեգոր եւ Ալեքսանդր Լիակազետի համապատասխանաբար 44-րդ եւ 64-րդ վայրկեաններուն նշանակած գնդակներուն «Թոթենհեմ» պատասխանեց Էրիկ Լամելայի միակ կոլով (33-րդ վայրկեան):

Այս հանգրուանէն ետք «Արսենալ» Փրեմիեր լիկայի աղիւսակին վրայ միայն 10-րդն է եւ ունի 41 կէտ, իսկ «Թոթենհեմ»՝ 7-րդն է 45 կէտով: Առաջատարը 71 միաւորով «Մանչեսթըր Սիթիին» է:

«ԻՆԹԵՐ» ԶԻՐՐՆԿԱԼՈՒԵԼՈՎ ՅԱՂԹԵՑ «ԹՈՐԻՆՈՅԻՆ»

Իտալիոյ ֆութպոլի առաջնութեան 27-րդ հանգրուանին «Ինթեր» հիւրընկալուեցաւ «Թորինոյին»:

Առաջին խաղակէսին բերդի գրաւում չարձանագրուեցաւ եւ երկրորդ կէսին «Ինթեր» Լուկակուչի եւ Մարտինէսի կոլերու շնորհիւ առաւելութեան հասաւ 1:2 արդիւնքով: «Թորինոյի» միակ կոլը նշանակեց Սանապրիան 70-րդ վայրկեանին:

Այս յաղթանակէն յետոյ «Ինթեր» կը շարունակէ գլխավորել իտալիոյ ֆութպոլի առաջնութեան՝ Սերիա Ա-ի մրցաշարային աղիւսակը եւ ունի 65 միաւոր: Երկրորդ տեղը 56 միաւորով «Միլան»-ն է, իսկ եռեակը կ'եզրափակէ «Յուվենտուս»-ը 55 միաւորով:

ՌՈՆԱԼՏՈՒԻ ԶԵՔ-ԹՐԻՔՐԸ ՅԱՂԹԱՆԱԿ ԲԵՐԱՎ «ԵՈՒՎԵՆՐՈՒՍԻՆ»

Իտալիոյ ֆութպոլի առաջնութեան 27-րդ հանգրուանին «Եուվենթուս» հիւրընկալուեցաւ «Կալիարիին»:

Թուրինեան ակումբի կազմին հեթ-թրիքի (երեք կոլի) հեղինակ դարձաւ Քրիշտիանու Ռոնալտուն: Փորթուկալացի կոլեր նշանակեց 10-րդ, 25-րդ եւ 32-րդ վայրկեաններուն: «Կալիարիի» կազմէն միակ կոլը խփեց Սինեոնէն 61-րդ վայրկեանին:

Այս խաղաշրջանէն յետոյ «Եուվենթուս» Սերիա Ա-ի մրցաշարային աղիւսակին վրայ 55 միաւորով 3-րդն է: Առաջատարը 65 կէտով «Միլանն» է:



ԶԵՆՐԻԽ ՄԻՍԻՔԱՐԵԱՆ ԽԱՂԱԴԱՂԱՅՈՒ ԿՐ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ 2-3 ՇԱՔԱՔԷՆ



Հայաստանի ֆութպոլի ազգային խումբի կիսապաշտպան Հենրիխ Միսիքարեան խաղադաշտ կը վերադառնայ 2-3 շաբաթէն:

«Արմենիբրեսի» հաղորդումով՝ այս մասին կը գրեն իտալական ՉԼՄ-ները: Միսիքարեան, որ վնասուածք ստացած էր Եւրոպայի լիկայի «Շախտիորի» դէմ առաջին խաղին, ունի աջ սրունքի մկանային վնասուածք: Ան նորէն կը խաղայ 2-3 շաբաթէն, որու հետեւանքով կիսապաշտպանը չի կրնար օգնել աշխարհի առաջնութեան ընտրական փուլի յառաջիկայ մի քանի հանդիպումներուն:

Հայաստանի ընտրանին Մարտի 25-ին գտումի փուլի շրջագիծէն ներս պիտի մրցի Լիւքսեմպուրկի հետ:

ԸՆՔԻՉ ԳԷՈՐԳ ՂԱՐԻՔԵԱՆ ԼԱՎ ՄԱՐԳԱՎԻՃԱԿՈՎ ԿՐ ՄՕՏԵՆԱՅ ՈՂԻՄԱՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՎԱՐԿԱՆԻՉԱՅԻՆ ՄՐԳԱՉԱՐԻՆ

Յունահռոմէական ոճի ըմբշամարտի հաւաքականի անդամ Գէորգ Ղարիքեանը լաւ մարզավիճակով կը մօտենայ Ողիպիական խաղերու վարկանիշային մրցաշարին:



«Լաւ ուսումնամարզական հաւաքներէն յետոյ լաւ մարզավիճակիմ եմ: Ճիշտ է նախորդ տարի լաւ մարզավիճակի էի եւ յաղթեցի Եւրոպայի առաջնութեան եւ յաղթանակի ձգտումը աւելի բարձր էր: Սակայն այս ժամանակահատուածը օգտագործած ենք մարզումներու վրայ ճիշտ աշխատելով», - «Արմենիբրեսի» հաղորդումով՝ լրագրողներու հետ գրոցի ընթացքին ըսած է մարզիկը:

Յունահռոմէական ոճի ըմբշամարտի ընտրանին հետեւեալ կազմով կը մասնակցի Պուտայեշտի վարկանիշային մրցաշարին՝ Գէորգ Ղարիքեան (60 կգ), Սլավիկ Գալստեան (67 կգ), Արթուր Շահինեան (87 կգ) եւ Դաւիթ Օվասայեան (130 կգ):

Մրցաշարը կը կայանայ Մարտի 18-21-ը:

ՈՂԻՄԱՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ԿԱԳՄԱԿԵՐԱՊԻՅՆԵՐԸ ՄՏԱՂԻՐ ԵՆ 50%-ՈՎ ՍԱԽՄԱՆԱՓԱԿԵԼ ՄԱՐԳԱՍԵՐՆԵՐՈՒ ՔԱՆԱԿԸ

Թուրքիոյի ամառնային Ողիմպիական խաղերու կազմակերպիչները վարակի տարածման սպառնալիքի պատճառով մտադիր են 50%-ով սահմանափակել մարզասէրներու քանակը՝ դաշտերու մէջ:

Ըստ «Արմենիբրեսի» այս մասին հաղորած է այս ՀԱՕԿ-ը: Խոշոր մարզադաշտերուն մէջ հանդիսականներու թիւը պէտք չէ գերազանցէ 20 հազարը: Եթէ համաճարակաբանական իրավիճակը բարելաւուի, կազմակերպիչները կարնան վերատեսութեան ենթարկել այդ որոշումը:

2020-ի Մարտ 24-ին յայտարարուեցաւ, որ Թուրքիոյի 32-րդ ամառնային Ողիմպիական խաղերը չետաձգուած են: Ողիմպիական խաղերը կը պահպանեն իրենց անուանումը՝ Թուրքիո-2020 սակայն կը սկսին 2021 թուականի Յուլիսի 23-ին եւ կ'եզրափակուին Օգոստոսի 8-ին:

«ՌՈՒՄԱ»-Ն ՊԱՐՏՈՒԵՑԱՎ ԱՌԱՆՑ ՄԻՍԻՔԱՐԵԱՆԻ

Իտալիայի ֆութպոլի առաջնութեան 27-րդ հանգրուանին «Ռոմա»-ն արտագնայ խաղին մրցեցաւ «Պարմա»-ի հետ:

Առաջին կէսի մեկնարկէն 9 վայրկեան անց «Պարմա»-ն բացաւ հանդիպման հաշիւը՝ աչքի ընկաւ Միշալիան: Երկրորդ կէսի 55-րդ վայրկեանին տան տէրերը կրկնապատկեցին հաշուի տարբերութիւնը: Կոլը իր ըրաւ Հերմանին: «Ռոմա»-ն պարտուեցաւ հիւրընկալուելով 2:0 հաշուով:

Հենրիխ Միսիքարեանը նախորդ խաղին ստացած վնասուածքի պատճառով չէր մասնակցեր հանդիպման:

Այս հանգրուանէն ետք «Ռոման» Սերիա Ա-ի մրցաշարային աղիւսակին վրայ 6-րդն է եւ ունի 50 միաւոր: 65 միաւորով առաջատարը «Ինթերն» է: